600.0071.15.03.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

15 մարտի 2017 թվականի №71Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի №30Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ԳՐԻՆ ՓԱՌԻՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի փետրվարի 24-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 24-ի «ԳՐԻՆ ՓԱՌԻՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Մեղրի-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №30Ա որոշման մեջ՝

   1) «Լեհվազ» բառը փոխարինել «Մեղրի» բառով.

   2) «մինչև 2018 թվականի դեկտեմբերի 18-ը» բառերը փոխարինել «մինչև 2017 թվականի մարտի 15-ը» բառերով».

   3) 2-րդ կետով հաստատված՝ «ԳՐԻՆ ՓԱՌԻՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Մեղրի» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0590 լիցենզիայի պայմանների 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. «Մեղրի-1» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 2500 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) հիդրոտուրբին №1՝ SFW1050-8/1180, 1050 կՎտ, 2016թ.,
2) գեներատոր №1՝ HL110-WJ-71P, 1050 կՎտ, 2016թ.,
3) հիդրոտուրբին №2՝ SFW1050-8/1180, 1050 կՎտ, 2016թ.,
4) գեներատոր №2՝ HL110-WJ-71P, 1050 կՎտ, 2016թ.,
5) հիդրոտուրբին №3՝ SFW400-12/1180, 400 կՎտ, 2016թ.,
6) գեներատոր №3՝ XJA-W-63/1X16, 400 կՎտ, 2016թ.:»:

2. «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2015 թվականի նոյեմբերի 4-ի №652-10068 գրությամբ ներկայացված №ԱԲԵՆ15/122-12 երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած վեց միլիոն դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
15 մարտի 2017թ.
ժամը 16[00]